Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/182» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30.09.2019թ.
Ժամը՝ 09:40

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Սարգսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գյուրջյան /գնահատող/, Կ. Ղազարյան /գնահատող/, Լ. Բաբայան /բացող/, Ռ. Գասպարյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Գ. Սարգսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ Սերգեյ Հայրապետյան Ա/Ձ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը: Համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի, որթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սերգեյ Հայրապետյան Ա/Ձ-ն ծանուցվել է առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցմանը 26.09.2019թ-ին և մինչև սույն թվականի սեպտեմբերի 27-ը պարտավոր էր շտկել անհամապատասխանությունը: Սակայն Սերգեյ Հայրապետյան Ա/Ձ-ի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվել են 29.09.2019թ-ին, ժամը 20:10-ին: Հետևաբար, համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 42-րդ կետի, եթե մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում առկա անհամապատասխանությունը, ապա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել Սերգեյ Հայրապետյան Ա/Ձ-ի հայտը և 1-ից 6-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Գ. Սարգսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կոնցեպտ Իվենթս» ՍՊԸ-ն, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մալետա» ՍՊԸ-ն, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլիտա Էսվե» ՍՊԸ-ն, որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից:

Հ/Հ	Առաջին տեղ զբաղեցրած մասնակից
1,3	«Կոնցեպտ Իվենթս» ՍՊԸ
2,5	«Մալետա» ՍՊԸ
4,6	«Էլիտա Էսվե» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Գ. Սարգսյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Սարգսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 09:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Գ. Սարգսյան

Անդամներ՝ Ա. Գյուրջյան

Կ. Ղազարյան

Լ. Բաբայան

Ռ. Գասպարյան

Քարտուղար՝ Ս. Եղիազարյան